ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ բուժաշխատողներ,

Սրտանց շնորհավորում եմ ձեզ մասնագիտական տոնի՝ Բուժաշխատողի օրվա կապակցությամբ:

Ձեր գործը բացառիկ կարևորություն ունի յուրաքանչյուր հասարակության համար, քանզի դուք կանգնած եք կյանքի ամենանուրբ սահմանագծին՝ ամեն օր պայքարելով մարդու առողջության, երբեմն էլ՝ կյանքի համար: Ձեր նվիրվածությունը, մասնագիտական հմտությունը, հոգատարությունն ու մարդասիրությունը արժանի են ամենաբարձր գնահատանքի:

Բժիշկների, բուժքույրերի, բուժօգնականների և ողջ առողջապահական անձնակազմի միջոցով է հնարավոր ապահովել առողջ և հոգատար միջավայր:

Անձամբ ցանկանում եմ խորին շնորհակալություն հայտնել ձեր պատասխանատու աշխատանքի, բարեխղճության և մարդասիրական ծառայության համար:

Մաղթում եմ ձեզ ու ձեր ընտանիքներին առողջություն, խաղաղություն, մասնագիտական նոր հաջողություններ և մարդկային գնահատանք՝ ձեր ամենօրյա անձնվեր աշխատանքի համար:

Թող ձեր բարի գործը միշտ ստանա արժանի գնահատանք և ապրի մարդկանց հիշողության մեջ՝ որպես ապրեցնող լույս:

Հպարտ ենք ձեզնով: